Հավելված
ՀՀ կառավարության 2012 թվականի
նոյեմբերի 22-ի N 1467 - Ն որոշման

Կ Ա Ր Գ

ՆԱԽԿԻՆՈՒՄ ՇՆՈՐՀՎԱԾ ՈՐԱԿԱՎՈՐՈՒՄՆԵՐԻ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆԵՑՄԱՆ

I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույն կարգով կարգավորվում են նախքան Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի մարտի 31-ի «Հայաստանի Հանրապետության կրթության որակավորումների ազգային շրջանակը հաստատելու մասին» N 332-Ն որոշմամբ հաստատված որակավորումների ազգային շրջանակը (այսուհետ՝ ՈԱՇ) ուժի մեջ մտնելը Հայաստանի Հանրապետությունում ուսումնական հաստատությունների կողմից շնորհված որակավորումների՝ ՈԱՇ-ով և Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից հաստատված նախնական (արհեստագործական), միջին և բարձրագույն մասնագիտական կրթության (այսուհետ՝ մասնագիտական կրթություն) մասնագիտությունների ցանկերով հաստատված որակավորումների համապատասխանեցման հետ կապված հարաբերությունները:

2. Հայաստանի Հանրապետության ուսումնական հաստատությունների և հիմնական կրթական ծրագրեր իրականացնող հաստատությունների շրջանավարտների՝ նախկինում շնորհված որակավորումների համապատասխանեցման կարգը տարածվում է ուսուցման բոլոր ձևերով կրթություն ստացած շրջանավարտների վրա:

II. ՆԱԽԿԻՆՈՒՄ ՇՆՈՐՀՎԱԾ ՈՐԱԿԱՎՈՐՈՒՄՆԵՐԻ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆԵՑՈՒՄԸ

3. Հանրակրթական ուսումնական հաստատությունների կողմից տրված տարրական կրթության մասին տեղեկանքը, հիմնական կրթության վկայականը և միջնակարգ կրթության ատեստատը հավասարազոր են ՈԱԾ-ի համապատասխանաբար 1-ին, 2-րդ և 4-րդ աստիճաններին:

4. Եթե մասնագիտական կրթության ավարտական փաստաթղթով ամրագրված որակավորումը համապատասխանում է Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից հաստատված մասնագիտական կրթության մասնագիտությունների ցանկերով հաստատված որակավորումներին՝

1) մինչև 3 տարի տևողությամբ նախնական մասնագիտական կրթական ծրագրի ավարտական փաստաթուղթը (դիպլոմը) հավասարազոր է ՈԱԾ-ի 3-րդ աստիճանին, իսկ 3 և ավելի տևողությամբ նախնական մասնագիտական կրթական ծրագրի ավարտական փաստաթուղթը (դիպլոմը)՝ ՈԱԾ-ի 4-րդ աստիճանին.

2) հիմնական կամ միջնակարգ կրթության հիմքով միջին մասնագիտական ծրագրերի ավարտական փաստաթուղթը (դիպլոմը) հավասարազոր է ՈԱԾ-ի 5-րդ աստիճանին՝ անկախ կրթական ծրագրի տևողությունից.

3) բակալավրի, մագիստրոսի և հետազոտողի կրթական ծրագրի ավարտական փաստաթուղթը (դիպլոմը) հավասարազոր է ՈԱԾ-ի համապատասխանաբար 6-րդ, 7-րդ և 8-րդ աստիճաններին.

4) մինչև 2011 թվականը ներառյալ շնորհված՝ դիպլոմավորված մասնագետի կրթական աստիճանը հավասարեցվում է մագիստրոսի կրթական աստիճանին:

5. Եթե մասնագիտական կրթության ավարտական փաստաթղթով ամրագրված որակավորումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության կառավարու-

թյան կողմից հաստատված մասնագիտական կրթության մասնագիտությունների ցանկերով հաստատված որակավորումներին, ապա օտարերկրյա պետությունների որակավորումների ճանաչման լիազոր մարմինը գնահատում է որակավորման համապատասխանությունը ՈԱԾ-ին և տալիս տեղեկանք:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ Դ. ՍԱՐԳՍՅԱՆ